

ապուռ մը, մսի տապակ՝ բրինձով, տապակ գինձով, վերն յիշուած այլեւայլ տեսակ չոր եւ մսեալ համեղ մտեղէններ, եւ վերջապէս երկու տեսակ ցորենի հաց, որ կը կոչուի «լաւաշ» եւ «թումուք» : Հայուն տունն այց ելլող օտարահանը կը գտնէ հոն ընդունելութիւն մը՝ արեւելեան սովորական քաղցրաւենեօք, որպիսիք են շաքարի եւ համեմուկի (vanille) մէջ եփուած պտուղներ՝ ուումաներէն «dulcet» կոչուած, «րահաթ» (Rohat) եւ «տաքտաք հէլվա» կոչուած շէրդէիով : \*\*

Սուչավայի Հայոց զգեստը մինչեւ վերջին տարիներս առ հասարակ արեւելեան էր, երկու սեռինն ալ հաւասարապէս : Այրը կը հագնէր շապիկ եւ «նայգույժ» կամ «շալվար» կոչուած սրնոց մը — ձմեռը գառնենիէ շինուած տաք սրնոց մը, ուումաներէն «մէշինի» կոչուած, որ եւ ցայսօր ասդին անդին կ'երեւայ. — վրան յաճախ մետաքսեայ ծաղկենկար վերարկու մը, ուումաներէն «անթէրէօ» (տճ. էնթ-թէ) կոչուած, որուն աջէն ձախ գոցուող կողերը թանկագին ծաղկենկար տաճկահան վարչամակ (շու) մը մէջքը պատատուելով դոց կը պահէ : Կուրծքին վրայ այս վերարկուն ծալքերուն մէջ գունաւոր՝ յաճախ մետաքսեայ թաշկինակ մը կ'ըլլայ : Առեւտրական ուղեւորութեանց ժամանակ այս վարչամակին տեղ կու գայ լայն «քէմեր» մը, որ է կաշեղէն քսակ մը՝ ապրանք գնելու դրամը կամ

\* «Տարտաք հէլվան», խմորեղէն մըն է, որչափ գիտնըր :